# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

Հաստատել Մրգավան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 09 նիստի հետևյալ օրակարգը.

1. Մրգավան համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2. Մրգավան համայքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

3.Մրգավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի, <<Մրգավանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ն

## ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին ***որոշում է***

Մրգավան համայնքի 2019թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածից մշակութային միջոցառումների իրականացում /08.02.04.51/ծրագրի 4269/ նպատակային նյութեր/ հոդվածին հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ դրամ

2. Հասարակական կազմակերպություններին աջակցություն /10.07.01.55/ ծրագրից 70000/ յոթանասուն հազար/ դրամ հատկացնել թատերական ներկայացումներ /08.02.05.52/ծրագրի 4239/այլ բնույթի ծառայություններ /հոդվածին:

3. Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում/06.04.01.52/ ծրագրի 4269/ նպատակային նյութեր/ հոդվածից 4212/էներգետիկ ծառայություններ/հոդվածին հատկացնել 50000/հիսուն հազար/ դրամ

4. Կառավարման մարմնի պահպանում/01.01.01.51/ծրագրի 4264/տրանսպորտային նյութեր/ հոդվածից արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում ծրագրի 4212/ էներգետիկ ծառայություններ/ հոդվածին հատկացնել 97210/իննսունյոթ հազար երկու հարյուր տասը/ դրամ

5.Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4241/մասնագիտական ծառայություններ/ հոդվածից

թատերական ներկայացումներ/08.02.05.52/ ծրագրի 4239/այլ բնույթի ծառայություններ/ հոդվածին հատկացնել 55000/հիսունհինգ հազար/ դրամ

մշակութային միջոցառումների իրականացում/08.02.04.51/ ծրագրի 4269/նպատակային նյութեր/ հոդվածին հատկացնել 115000/մեկ հարյուր տասնհինգ հազար/ դրամ

6.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ /11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից

կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4112/պարգևատրում/հոդվածին հատկացնել 1799000/մեկմիլիոն յոթ հարյուր իննսունինը հազար/ դրամ

գրադարանային ծառայություններ/08.02.01.51/ ծրագրի 4112/պարգևատրում/հոդվածին հատկացնել 80000/ութսուն հազար/ դրամ

գյուղատնտեսական կենդանիների պատվաստում /04.02.01.51/ ծրագրի 4112/պարգևատրում/ հոդվածին հատկացնել 73000/յոթանասուներեք հազար/դրամ

կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4234/տեղեկատվական ծառայություններ/ հոդվածին հատկացնել 31000/երեսունմեկ հազար/ դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38-Ն

## ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի 18-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին

***ՈՐՈՇՈՒՄ Է***

Մրգավան համայնքի տարածքում սահմանել 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի , շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

1)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ ամառանոցային/ տների, ինչպես նաև՝ մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000դրամ:

2)Սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝30.000դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000դրամ

գ.1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000դրամ

դ.3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000դրամ.

Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

3)Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000դրամ

4)20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար `5000դրամ

2.Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների / բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանվա կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ.

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմեր և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության

համար տեղական տուրքը սահմանվում է` 5000դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար` 200.000դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար` 60.000դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

1)Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 6000դրամ,

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 10.100դրամ,

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ` 13.100դրամ,

դ.101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 20.100դրամ,

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 25.100 դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 45.100 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 6000դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 10.100դրամ,

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 13.100 դրամ,

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 20.100 դրամ,

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 25.100 դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 45.100 դրամ.

7. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 1քմ-ի համար 150 դրամ:

8.Համայնքի վարչական տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին/ սաունաներին/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար.

1) առևտրի օբյեկտների համար` 50.000դրամ

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 100.000դրամ

3)բաղնիքների /սաունաների/ համար` 400.000դրամ

4) խաղատների համար` 1.000.000դրամ

5) շահումով խաղերի համար` 500.000դրամ

6) վիճակախաղերի համար` 100.000 դրամ

9. Համայնքի վարչական տարածքում` համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է`

հիմնական շինությունների ներսում`

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար `5000դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000դրամ

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.100դրամ

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.100դրամ

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.100դրամ

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000դրամ

ե.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝9000դրամ

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000դրամ:

10.Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս 1քմ-ի համա տեղական տուրքը սահմանվում է՝

1)Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20ծավալային տոկոս արտադարանք գովազդող արտաքին գովազդի համար՝2000դրամ:

2) Թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ:

3)Սոցիալական գովազդի համար՝ 0դրամ:

4)Այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ:

5)Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

6)Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քմ-ի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

11.Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100.000դրամ:

12.Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10.000դրամ:

13.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և / կամ/ մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500.000դրամ:

14.Մրգավան համայնքի վարչական տարածքում Խ.Աբովյան 29 հասցեից մինչև Խ.Աբովյան 31 հասցեն ներառյալ, Երևան-Արտաշատ մայրուղի 1 հասցեից մինչև Երևան-Արտաշատ մայրուղի 11հասցեն ներառյալ և Արտաշատյան փողոց 1-ից մինչև Արտաշատյան փողոց 1/1 հասցեն ներառյալ համարել 1-ին գոտի և այդ գոտում գտնվող հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար կիրառել 0.75 գործակիցը:

15.Որոշման բոլոր կետերի դրույքաչափերը հաշվարկել 0.5գործակցի կիրառմամբ, բացառությամբ 4-րդ կետի:

Տեղական վճարների դրույքաչափերը.

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների / այդ թվում դրանց վերակառուցում վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ:

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ:

4.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000դրամ:

5.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 2000դրամ:

6.Աղբահանության համար

1)Համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական `200դրամ:

2)Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա.`ըստ ծավալի`1 խմ աղբի համար-3000դրամ

բ.ըստ զանգվածի` 1 տոննա աղբի համար` 10000 դրամ:

3) Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում, այդ թվում` հասարակական , հանրային ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.առևտրի /այդ թվում շուկաների/ , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով 1քմ մակերեսի համար `30դրամ:

բ. Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայությունների ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար`20դրամ:

գ. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով` 1քմ մակերեսի համար` 5 դրա

դ. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և այլ նմանատիպ հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար`3դրամ:

ե. Շինություններում որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն աղբահանության վճարը ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

7.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար` 500դրամ:

8.Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վարձավճարի չափը սահմանել ամսական 6000դրամ, իսկ այլ համայնքներից համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների ամսեկան ծնողական վարձավճարը` 12.000 դրամ:

9.Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար տեղական վճարի չափը սահմանել 100.000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 39-Ն

### ՄՐԳԱՎԱՆԱԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ<<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Մրգավան համայնքի ավագանին ***որոշում է***

1.Հաստատել Մրգավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի, <<Մրգավանի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1,2 հավելվածների.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի
Մրգավան համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 06-ի թիվ 39 -ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 14:

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | | 320000 |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 136000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 3. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 168000 |
| 4. | Առաջատար մասնագետ | 1 | 150000 |
| 5. | Առաջատար մասնագետ | 1 | 150000 |
| 6. | Առաջին կարգի մասնագետ | 1 | 130000 |
| 7. | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 109000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 8. | Հավաքարար | 1 | 80000 |
| 9. | Պահակ | 1 | 80000 |
| 10. | Վարորդ | 1 | 80000 |
| 11. | Էլեկտրիկ | 1 | 73000 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | | |
| 12. | Հարկահավաք | 1 | 125000 |
| 13. | Գրադարանավար | 1 | 80000 |
| 14. | Անասնաբույժ | 1 | 73000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզի
Մրգավան համայնքի ավագանու
2019թ.դեկտեմբերի 06-ի թիվ 39-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 15:

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| 1. | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 125000 |
| 2. | Հաշվապահ | 0.5 | 73000 |
| 3. | Դաստիարակ | 2 | 76000 |
| 4. | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 73000 |
| 5. | Դաստիարակի օգնական | 2 | 73000 |
| 6. | Բուժքույր | 1 | 73000 |
| 7. | Խոհարար | 1 | 73000 |
| 8. | Խոհարարի օգնական | 0.5 | 57000 |
| 9. | Տնտեսվար | 0.5 | 57000 |
| 10. | Հավաքարար | 1 | 73000 |
| 11. | Պահակ | 1 | 73000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 11 | 1049000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ